ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ երկխոսությունն ունի մեծ դեր: Երկխոսությունը, որի պարզ ձևը զրույցն է, կայանում է, եթե նրան մասնակցում են երկու կամ ավելի մարդ: Մտածողության և մարդու մտային գործունեության զարգացման հետ փոխվում են երկխոսության դրսևորման ձևերը: Խոսքի տարբեր ոլորտներում կարող են կիրառվել երկխոսության յուրահատուկ դրսևորումներ, որոնք ըստ էության տարբերվում են սովորական երկխոսություններից և առանձնանում են կառուցվածքային ու տրամաբանական հատկանիշներով:

Հայտնի է, որ խոսքն ըստ գործածության բնույթի լինում է բուն կամ արտաքին, որով խոսողը իր միտքն է հաղորդում ուրիշին, և ներքին, որը չի հաղորդվում և լեզվի մտածական ներքին դրսևորումն է: Խոսքի դրսևորումներից է ներքին երկխոսությունը, այսինքն որևէ մեկի զրույցն ինքն իր հետ:

Հայտնի հոգեբան Կուչինսկին գտնում է, որ մարդու հաղորդակցումը ինքն իր հետ «իսկական երկխոսություն է»[1]:

Երկխոսության այս տեսակը հայտնի էր դեռևս հին Հունաստանում: Յամբլիխի գրացուցակի համաձայն Պյութագորյան միության անդամներից յուրաքանչյուրը /217 տղամարդ և 18 կին/ ամեն օր քնելուց առաջ ինքն իր հետ զրուցում էր: Նրանք քննում էին հետևյալ հարցերը. «Ինչպե՞ս ես անցկացրի ընթացիկ օրը», «Ի՞նչ արեցի», «Ի՞նչ պարտավորություն ես չկատարեցի»:

Սոկրատի աշակերտ Ա.Աթենացին ինքն իր հետ երկխոսությունը համարում էր կարևոր նախապայման մտավորական դառնալու համար: Այն հարցին, թե ի՞նչ է իրեն տվել փիլիսոփայությունը, նա պատասխանել է. «Ինքս ինձ հետ զրուցելու հմտություն»:

[1] Кучинский Г.М, Психология внутреннего диалога, Москва 1988, с. 191.

Ինքն իր հետ երկխոսության ժամանակ տեղի է ունենում անձնավորության երկատում, զրույց իր ներքին ձայնի հետ, երկխոսություն ես-ի տարբեր դերերի միջև:

Ներքին երկխոսությունը որպես գեղարվեստական հնարանք վարպետորեն է օգտագործել բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը «Երկխոսություն իմ և իմ միջև» պոեմում, որտեղ արտացոլվում են Դարաբաղյան շարժումը և Սպիտակի ահավոր երկրաշարժի ողբերգությունը:

Հետաքրքրություն է ներկայացնում պոեմի վերնագիրը[2]: Այստեղ երկխոսություն բառը ձեռք է բերել յուրահատուկ իմաստ: Պոեմում նույն հոգում միաժամանակ հնչում, իրար ընդդիմախոսում և իրար լրացնում են երկու ձայն՝ առաջին ձայնը և երկրորդ ձայնը: Առաջինը բռունցքված հայ ժողովրդի հավաքական ձայնն է, երկրորդը՝ հայ տառապյալ անհատի, հենարան ու մխիթարություն փնտրող զավակի ձայնը:

Երկրորդ ձայնն անընդհատ դիմում է Մայր Թերեզին, ներկայացնում իր հոգսն ու ցավը, օգնություն խնդրում գթության տիրուհուց:

Պոեմը գրված է երկխոսության սկզբունքով, որի շնորհիվ բանաստեղծ-հրապարակախոսի ասելիքը դառնում է առավել անմիջական ու ներգործուն: Գեղարվեստական այս բարձրարժեք ստեղծագործությունը կառուցվածքով և ոճով որոշ չափով հարում է հրապարակախոսական ոճին:

Երկխոսության յուրահատուկ դրսևորումներից մեկը կոչվում է միակողմանի. այս դեպքում խոսողն ունի լսողներ, որոնք երկխոսությունը պայմանավորող անձեր են, սակայն ըստ էության արտահայտված խոսքով չեն մասնակցում երկխոսությանը: Միակողմանի երկխոսության օրինակները շատ են Ա.Շիրվանզադեի «Հրդեհ նավթագործարանում» պատմվածքում.

« - Օգնեցե՞ք... շտապեցե՞ք... ես փող կտամ... ջուր հասցրեք, ի՞նչ եք սառել... անպիտաննե՛ր... քանդեցիք դուք իմ տունը, սրիկաննե՛ր... գողե՛ր... ավազակնե՛ր, - անդադար հայհոյում էր նա մշակներին՝ շվարած այս ու այն կողմ վազվզելով»:

---

[2] Ի դեպ, Պ.Սևակը «իմ և իմ միջև» արտահայտությունը հիանալի է օգտագործել «Բարեխոս եղիր իմ և իմ միջև» բանաստեղծության մեջ:

Միակողմանի երկխոսությանը փոքր չափով մոտենում է աղոթքը: Աղոթքը աղաչանք է, դիմում Աստծուն ու սրբերին:

«- Տե՛ր, դու՛, իմ երեխային փրկիր չարից, տե՛ր, ինձ տուր նրա ցավը...»:

Մի յուրատեսակ աղոթք է Գրիգոր Նարեկացու «Մատյանը», ուր հեղինակը խոսում է բարձրյալի հետ: Վանական քերթողն աղերսում է Աստծուն, որ նա իր «անմահների գումարտակով» ապահովի հանուր մարդկության պաշտպանությունն ու անդորրը: Նարեկացին օգտվել է աղոթքից, որը հոգևոր գրականության ժանրային համակարգի դրսևորումներից է: Այստեղ քնարական հերոսը զրուցում է Աստծո հետ՝ որպես միանգամայն իրական, շոշափելի և մատչելի գոյի:

Ընդհանրապես Նարեկացու «Մատյանի» բանաստեղծությունները դժվար է մենախոսություն անվանել: Ճիշտ է, զրուցակիցը չի պատասխանում, բայց երևում է, շոշափելի է, նրան դիմում են, ինչպես կդիմեն ներկա եղող մարդու:

Երկխոսության յուրահատուկ դրսևորում է նաև անպատասխան երկխոսությունը: Օրինակ՝

«Մարգարիտը դարձավ ինձ.

- Դուք դեռ երկա՞ր կմնաք այստեղ:

Պատասխանի փոխարեն ես նրան նայեցի լուռ ու վշտացած» (Ա.Սիարոնյան):

Լռությունը կարող է լինել. ա) համաձայնության նշան.

- Ուզու՞մ ես գալ ինձ հետ,- ասաց Թաթուլը:

Մարանը համաձայն էր, բայց ոչինչ չպատասխանեց:

բ) անհամաձայնության նշան.

«-Փախչենք, փախչենք, Մարգարիտ, հավատա ինձ, դա լավագույն ելքն է:

- Պատասխանի փոխարեն նա երկու ձեռքով բռնեց և նայում էր դեմքիս լռությամբ (Ա.Ա.):

գ) չկողմնորոշվելու նշան.

«- Ախր ինչու՞ ես թողել՝ եզները հարևանի արտը տրորեն:

Երեխան լուռ էր, գլուխը քաշ ծգած» (Ա.Ա.):

Կարող է խոսակիցը չպատասխանել, որովհետև ինքն այդ պահին տարված է մտքերով:

«Մարգարիտը երկար ժամանակ դեռ չէր հանգստանում ստացած ցնցող տպավորությունից. նա լուռ էր:

- Ինչու՞ չես խոսում,- հարցրի ես կամացուկ:

- Ես դեռ մտածում եմ անտառի գիշերային հեքիաթների մասին» (Ա.Ա.):

Հնարավոր է, որ խոսակիցը պարզապես չցանկանա պատասխանել իր զրուցակցին:

«- Խոսի՛ր, եթե դեռ մի ուրիշ ցավ ունիս, բա՛ց արա իմ առաջ սրտիդ վարագույրը...

Թագավորը չպատասխանեց. նա լուռ նայում էր ծովակին» (Մուրացան):

Կան դեպքեր, երբ խոսակիցը այդ պահին լռում է, բայց մտքում պատասխանում է խոսողի հարցին: Գրողը ներկայացնում է մտքի խոսքը.

«- էդ անտեր հոտը էլի գցեցի՞ր:

Օրիորդ Մարիի պատասխանը մտքում էր. «Անխի՛ղճ մարդ, ըրածս ի՞նչ է բաժակ մը սուրճ պիտի պատրաստեմ»» (Մ.Գալշոյան):

Կարող է և խոսողը խոսակցից պատասխան չի սպասում, չի ակնկալում. լուր է հաղորդում խոսակցին, ինչ-որ բան է հանձնարարում, կանչում է հեռվից և այլն:

«Ես վեր կացա և պատրաստվում էի ներս գնալ:

Նա բռնեց ձեռքս:

- Նստեցեք այստեղ:

Ես լռությամբ հնազանդվեցի» (Ա.Ա.):

«- Ցողի՛կ,- ձայն տվեց ջրաղացպանը,- ավլիր քարի մոտ, ցորեն է թափված:

Ցողիկը մեծ խնամքով հավաքեց մի բուռ ցորենը» (Ս.Զորյան):

Կարող է խոսակիցը, խոսողի ասածների հետ կապված, արտահայտել հույզի, վրդովմունքի դրսևորումներ (լաց, ծիծաղ, քրքիջ, բնաձայնական տարբեր արտահայտություններ և այլն):

«... Հայրը նայեց խռոված ու շեշտակի.

- Շողե՛ր.

Աղջիկը գլուխը չբարձրացրեց և հանկարծ բարձրաձայն հեկեկաց» (Ա.Ա.):

«- Ո՞վ ես:

Վիրավորը պատասխանի փոխարեն տնքում էր» (Ա.Ա.):

Խոսակիցը կարող է խոսողին միայն ժեստով պատասխանել՝ ձեռքի և գլխի շարժումներով: Այս դեպքում հարցը առաջարկվում է, իսկ պատասխանը տրվում է անձայն՝ դիմախաղի կամ ձեռքի շարժումների միջոցով:

«- Ինչու՞ նրան չես պատժում:

Մի դառն հեգնական ժպիտ սահեց Մուրադի դեմքով: Նա ուսերը թոթվեց, գլուխը երերեց: Ասելն էր. ինչպե՞ս պատժեմ քեզ, խեղճ էակ, քանի որ աստված ինքն է պատժել:

Սոնան գուշակեց այս լուռ պատասխանի իմաստը» (Շ.):

Երկխոսության այս յուրահատուկ դրսևորումներում խոսողական ակտիվությունը մեկի կողմն է: Զրույցին ներկա եղողները երկխոսությանը ընթացք տվող անձեր են: Ըստ էության ներքին երկխոսությունը, միակողմանի երկխոսությունը, անպատասխան երկխոսությունը, պատասխանը ժեստով երկխոսությունը տրամախոսության ոչ սովորական դրսևորումներ են, որոնք առավելապես գործածվում են գեղարվեստական, առօրյա խոսակցական և հրապարակախոսական ոճերում:

Բնականաբար այս երկխոսությունների գործածության հաճախականությունը երկխոսության հիմնական տեսակների համեմատությամբ մեծ չէ: Մարդն իր կյանքի հարափոփոխ ընթացքում հանդիպում է նման երկխոսությունների, որոնք ի հայտ են գալիս տարբեր իրավիճակներում և խոսքը դարձնում են հետաքրքրական, ինքնատիպ: